Մի կարեւոր որոշում

Ուրբ Էջմիածնի գերագույն Հոգեւոր Խորհուրդը, իր անցյալ տարվա նոյեմբերի 18-ին գումարված նիստում, որոշել է սույն թվի սեպտեմբերի 30-ին տոնել Ամենայն Հայոց Կաթողիկոս Գեորգ Զ.-ի ծննդյան 80-ամյա, և եկեղեցական, հասարակական և մանկավարժական գործունեության 60-ամյա հոբելյանը: Մայր Հայրենիքում և Սփյուռքում կազմակերպված են Հոբելյանական կենտրոնական Հանձնաժողովներ: Հրահանգված է բոլոր թեմերի առաջնորդներին՝ ստեղծել տեղական հանձնաժողովներ և ջանալ, որքան կարելի է, տոնակատարությանը տալ համազգային բնույթ և արժանավայել հանդիսավորություն: Նախապես լույս է ընծայվելու Նորին Վեհափառության ազգային-եկեղեցական բնույթ կրող կոնդակների, հոդվածների և քարոզների ժողովածուն:

Գերագույն Հոգեւոր Խորհրդի այս կարևոր որոշումը, անկասկած, խանդավառությամբ կընդունվի Մայր Հայրենիքի և Սփյուռքի բոլոր հայ հավատացյալների կողմից: Մեր ժողովուրդը երախտագետ ժողովուրդ է. նա գիտե, ըստ պատշաճի, գնահատել և մեծարել իր եկեղեցական հասարակական աշխի ընկնող և նվիրված գործիչներին, և, ներկա դեպքում, հարմար առիթ է, որպեսզի կարողանա իր երախտագիտական հարգանքը մատուցել իր սիրելի Հովվապետին:

Մայր Աթոռը, Գրիգոր Լուսավորչից սկսած, բազմաթիվ գահակալներ է ունեցել, որոնց մեջ եղել են կազմակերպչական և տեսական մեծ պատրաստություն ունեցող շատ հայրապետներ, սակայն եզակի են այն գահակալները, որոնք հայ եկեղեցական տարեգրության մեջ, գագաթներն են կազմել. այդպիսի կաթողիկոսներից մեկն է՝ Գեորգ Զ. Կաթողիկոս Զորեֆչյանը:

Նորին Ս. Օծությունը Ս. Էջմիածնի Գեորգյան Հոգեւոր Ճեմարանը ավարտելուց և մասնագիտական բարձրագույն կրթությունը ստանալուց հետո, ամբողջապես նվիրվել է եկեղեցական-հասարակական աշխատանքներին: Եվ, այնուհետև, նա անշեղաբար քայլել է իր հարազատ ժողովրդի հետ շիտակ քայլերով, հաշակելով ժողովրդին վիճակված և՛ դառնությունը, և՛ քաղցրությունը: Բերեմ նրա եկեղեցական, հասարակական և մանկավարժական բեղմնավոր աշխատանքներից մի քանի դրվագներ:

Իր հասարակական-մանկավարժական աշխատանքների առաջին շրջանում, մենք Հոբելյարին նախ գտնում ենք իր հայրենի Նոր Նախիջևանի հայկական դպրոցում աշխատելիս որպես մանկավարժ: Լինելով պատրաստված երաժշտագետ և հայագետ, նա ջանք չի խնայել իր իմացությունը աշակերտներին տալու և նրանցից շնորհալի մասնագետներ պատրաստելու ուղղությամբ: Առաջին Համաշխարհային պատերազմի ծանր օրերին, մենք նրան գտնում ենք Էջմիածնում և Երևանում, որպես տեղի Եղբայրական օգնության մասնաճյուղի նախագահ՝ Արևմտյան Հայաստանից եկած գաղթականներին և որբերին ամոքողի, սրտցավ հոգածուի հայրական դերում: Այնուհետև, մենք նրան գտնում ենք Թբիլիսիում, որպես թեմի առաջնորդ, որն. իր մեղվաջան աշխատանքով կազմակերպում, կարգավորում է թեմը: Խորեն Մուրադբեկյան Կաթողիկոսի գահակալության տարիներին, նրան տեսնում ենք Էջմիածնում. նա իր շրջահայաց, իմաստուն խորհուրդներով և գործով, ամեն կերպ աշխատում է բարելավել Մայր Աթոռի վիճակը:

Առանձնապես մեծ է եղել Գեորգ Զ. Կաթողիկոսի դերը Հայրենական Մեծ Պատերազմում: Ազատագրական Մեծ Պատերազմի օրերին, հայրենասեր Հայրապետը (այն ժամանակ դեռ տեղակալ) կոչ արեց հավատացյալներին գործուն մասնակցություն ցուցաբերել ազատասեր ամբողջ մարդկության և

ճանաչելարհային քաղաքակրթության մանացու բշնամի՝ հիտլերյան Գերմանիայի դեմ մղված պայքարում: Հովվապետի կոչերով, Մայր Հայրենիքի և Սփյուռքի հավատացյալները կազմակերպեցին «Սասունցի Դավիթ» և «Բաղրամյան» տանկային շարասյուները և ուղարկեցին հակառ՝ կռվելու Հայրենիքի բշնամիների դեմ:

Իմաստուն Հայրապետը, իր տեղակալության շրջանից սկսած, արել է հնարավորը՝ բարելավելու համար Մայր Աթոռի և Հայրենի կառավարության փոխհարաբերությունը: Նրա ընդունելությունը ՍՍՌՄ Մինիստրների Սովետի Նախագահ Ի. Վ. ՍՏԱԼԻՆԻ կողմից, պատմական բացառիկ փաստ է և նոր ու անվիճելի ապացույց՝ խղճի կատարյալ ազատության սովետական ազատ կարգերում:

Բոլոր տեղերում էլ, ուր աշխատել է մեծավաստակ Եկեղեցականը, իր նվիրված, քրտնաջան և անբասիր աշխատանքի համար սիրվել է ժողովրդի կողմից: Ժողովրդի նրա նկատմամբ տածած վերաբերմունքի լավագույն ցուցանիշն է հանդիսանում նախորդ Ազգային-Եկեղեցական ժողովը, ուր աշխարհի բոլոր ծայրերից եկած պատգամավորները, մեծ խանդավառությամբ, իրենց ձայնը տվին նրան և բազմեցրին Հայրապետական գահի վրա:

Մայր Աթոռը, Գեորգ Զ. Կաթողիկոսի օրոք, հաստատապես կանգնեց զարթոնքի ուղու վրա. նրա նախաձեռնությամբ մեծացավ էջմիածնի միաբանության կազմը, վերաբացվեց Հոգևոր Ճեմարանը, սկսվեց «էջմիածին» ամսագրի հրատարակությունը, սերտացավ Մայր Աթոռի և Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսության փոխհարաբերությունը, կազմակերպվեցին թեմերը և այլն:

Այնգարդ Վենափառի իղձն է այժմ՝ ազատագրված տեսնել Թուրքիայի կողմից Հայաստանից անիրավորեն գրավված հայկական շրջանները և Սփյուռքի հայությունը վերադարձած և համախմբված իր նվիրական հայրենիքում:

Յավալի է սակայն նշել, որ արտասահմանում վարձված հայրենադավների մի խմբակ, չի դադարում զրպարտել մեծագործ Հովվապետին այն պատճառով, որ նա թույլ չի տալիս, որպեսզի Հայ Եկեղեցին դուրս գա իր կրոնական շրջանակներից և օգտագործվի Սովետական Միության բշնամի ուժերի կողմից, որոնք շարունակ դավեր են նյութում խաղաղության դեմ, ազատասեր ժողովուրդների դեմ, որոնց թվում նաև հայ ժողովրդի դեմ: Հավատացյալի դիմակ հագած այդ կարգի մարդկանցից զգուշացրել է Հիսուսը. «Զգույշ լերուք ի սուտ մարգարէից, որ գան առ ձեզ հանդերձիւք ոչխարաց, և ի ներքոյ են գայլք յափշտակողք: Ի պտղոյ նոցա ծանիջիք զնոսա. միթէ քաղիցե՞ն ի փշոց խաղող, կամ ի տատասկէ՝ թուզ: Այսպէս ամենայն ծառ բարի՝ պտուղ բարի առնէ, և ծառ չար՝ պտուղ չար առնէ: Ո՛չ կարէ ծառ բարի պտուղ չար առնել, և ոչ ծառ չար պտուղ բարի առնել» (Մատթեոսի Ավետարան, է, 15—17):

Հավատացյալ ժողովուրդը հանաչում և վստահում է իր Հովվապետին: Նա լիովին հավատացած է, որ իր ծոցից ելած, իր հետևում վաթսուն երկար ու ձիգ բեղմնավոր տարիների աշխատանք թողած Հայրապետը չի շեղվի իր հաստատուն ընթացքից: Նա լիովին հավատացած է, որ Նորին Ս. Օծության համար չկա բարձրագույն այլ շահ, քան իր հարազատ ժողովրդի շահն է: Նրա համար չկա այլ նպատակ, քան տեսնել իր ժողովրդին բարեկարգ, բախտավոր և երջանիկ:

Կասկած լինել չի կարող, որ հայ հավատացյալները, աշխարհի որ կողմումն էլ լինեն, բացառիկ խանդաղատանքով և սիրակամ պիտի նշեն ալեզարդ Հայրապետի հոբելյանը:

Գեորգ Զ. Կաթողիկոսի 80-ամյա, և եկեղեցական, հասարակական ու մանկավարժական գործունեության 60-ամյա հոբելյանը, ինչպես նշված է Գերագույն Հոգևոր Խորհրդի որոշման մեջ, պիտի ընթանա «Հայ ժողովրդի և Ս. էջմիածնի, Սփյուռքի և Մայր Հայրենիքի բարոյական կապի ամրապնդման և Մայր Աթոռի ու իր ազգային-կրոնական և մշակութային հաստատությունների վիճակը հաստատապես ապահովելու ուղղությամբ»:

Կենտրոնական և թեմական հոբելյանական հանձնաժողովները այժմյանից պիտի գործի անցնեն: Անհրաժեշտ է լավ կազմակերպել և հանդիսավոր նշել հայրենասեր Հայրապետի հոբելյանը:

«Մշակն արժանի է վարձու իւրոյ»: